ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12. 1961 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920)

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1961, 337 էջ:

Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման համար մղված պայքարի ժամանակաշրջանը հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենահետաքրքիր և չափազանց բարդ շրջաններից մեկն է։ Բնական է, որ Անդրկովկասի այն ժամանակվա տնտեսական, քաղաքական և ազգային բարդ հարաբերությունների խորը անալիզի դեպքում միայն հնարավոր կդառնա տալ Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման համար մղված պայքարի մարքսիստական պատմությունը։

Չի կարելի ասել, թե այդ ուղղությամբ քիչ բան է արված։ Ընդհակառակը, 1917—1921 թթ. մասին կուտակվել է հարուստ գրականություն, լույս են տեսել նյութերի և փաստաթղթերի ժողովածուներ, մեծ թվով ուսումնասիրություններ[1]։

Հ. Կարապետյանի մեծածավալ մենագրությունը նվիրված է Մայիսյան զինված ապստամբության պատմության խորը և բազմակողմանի լուսաբանմանը։

Հեղինակը միաժամանակ չի շրջանցել Մայիսյան ապստամբության ուսումնասիրության բնագավառում գոյություն ունեցող տարակարծությունները։ Նա վիճելի, սկզբունքային հարցերի մասին տալիս է իր կարծիքը և փորձում հիմնավորել այն։ «Նպատակ ունենալով տարբեր վայրերում տեղի ունեցած ապստամբության պատմությունը տալ հնարավորին չափ լրիվ, հանգամանորեն աշխատել ենք հիմնավորել այն պայմանավորող ներքին և արտաքին գործոնները, շարժիչ ուժերի տեղն ու դերը, ապստամբության պարտության պատճառները» (էջ 7),—գրում է հեղինակը։

Մայիսյան ժողովրդական ապստամբությունը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Ռուսաստանում Սովետական իշխանության համար մղված պայքարի ամենափառավոր էջերից մեկն է։ 1920 թ. մայիսին դաշնակցական կառավարության քաղաքականության հետևանքով ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև կանգնած, արյան ու արցունքի մեջ լողացող հայ ժողովուրդը ղենքը ձեռքին փողոց դուրս եկավ՝ իր բախտը տնօրինելու իրավունքը նվաճելու համար։ Իրադրությունը չափազանց բարդ էր։ Ապստամբության հաղթանակի արտաքին և ներքին պայմանները, ելնելով Հայաստանի, Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի կացությունից ընդհանուր առմամբ նպաստավոր էին, բայց չնայած դրան, Մայիսյան ապստամբությունը պարտվեց։ Պետք է նշել, որ Մայիսյան ապստամբությունը տեղի ունեցավ պատմական բարդ ու բազմազան իրադրություններում և այդ առումով էլ դժվար են սովետահայ պատմաբանների խնդիրները։ Չկան խիստ անհրաժեշտ վիճակագրական տվյալներ, պակասում են փաստաթղթերը։

---

1 Տե՛ս Ս. Կասյան, Զախության մանկական հիվանդությունը մեղանում, «Նոր աշխարհ», № 2, 1922։ Ա. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», գիրք երրորդ, 1923։ Շ. Ամիրյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920, 1927։ Թ. Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, 1929։ Ա. Խանջյան, Մայիսյան ապստամբությունից դեպի հաղթակոն նոյեմբերը, 1935։ А Эльчибекян, Победа Советской власти в Армении, 1954. Его же. Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении, 1957։ Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում, 1956։ Ծ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, 1957։ Г. Галоян. Борьба за Советскую власть в Армении. 1957. С. Вартанян. Победа Советской власти в Армении, 1959. С. Карапетян Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, 1959 և այլն։

Այնուամենայնիվ, չնայած այդ բոլորին, թեև դանդաղորեն, բայց հաստատաքայլ առաջ է ընթանում ապստամբության պատմության ուսումնասիրության գործը։ Պատմաբանների քրտնաջան աշխատանքի շնորհիվ կաթիլ առ կաթիլ ի մի են հավաքվում փաստաթղթերը և ստացվում է Մայիսյան ապստամբության առաջացման, ընթացքի և պարտության ամբողջական պատկերը իր գիտական բացատրությամբ։ Պրոբլեմի ուսումնասիրության այս առաջընթացը, իհարկե, կատարվում է բավականին դժվարությամբ, սուր բանավեճերով։

Մայիսյան ապստամբության պատմության ուսումնասիրությամբ, իհարկե յուրովի, զբաղվում են նաև դաշնակցականները, որոնք ճգնում են «ապացուցելու», թե Հայաստանում ընդհանրապես ռևոլյուցիոն, կոմունիստական շարժում գոյություն չի ունեցել և ամեն կերպ փորձում են խեղաթյուրել Մայիսյան ապստամբության համաժողովրդական բնույթը։

Հ. Կարապետյանը իր աշխատության առաջին գլխում, որը վերնագրված է. «Հայաստանի տնտեսական և քաղաքական վիճակը 1918—1920 թթ. աշխատավորների պայքարը դաշնակների տիրապետության դեմ մինչև Մայիսյան ապստամբությունը», կարողացել է հերքել դաշնակների վերսիան և համոզիչ կերպով ցույց տալ, որ Մայիսյան ապստամբությունը 1918—1920 թթ. պատմության ամբողջ ընթացքով նախապատրաստված համաժողովրդական զինված ապստամբություն է։

Գրքում հանգամանորեն նկարագրվում են քաղաքական իրադրությունը Հայաստանում դաշնակների տիրապետության տարիներին, երկրի ժողովրդական տնտեսության ծայրահեղ քայքայվածությունը, աշխատավորների ռևոլյուցիոն ելույթները և կոմունիստական կազմակերպությունների անձնազոհ աշխատանքը քողազերծելու Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը և միջազգային իմպերիալիզմի մեքենայությունները։

Հեղինակը այնուհետև մանրամասնորեն շարադրում է մայիսյան ցույցերի և այնուհետև ապստամբության պատմությունը Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Դիլիջանում և Զանգեզուրում։ Հ. Կարապետյանին հաջողվել է, ընդգրկելով բոլոր հայտնի նյութերը և ավելացնելով նորերը, տալ Մայիսյան ապստամբության ամբողջական պատկերը Հայաստանում։ Բերված առատ փաստական նյութը մեկ անգամ ևս ապացուցում է հանրահայտնի այն դրույթը, որ Մայիսյան ապստամբությունը դաշնակցականների տիրապետության տակ գտնվող Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման տրամաբանական արդյունքն էր։ Ապստամբությունը, ինչպես ցույց են տալիս փաստերը, բռնկվել էր Հայաստանի բոլոր շրջաններում և կրում էր համաժողովրդական բնույթ։

Թվում է, թե այսպիսի պայմաններում ապստամբությունը պետք է անպայման հաղթանակեր։ Բայց այն չհաղթանակեց։

Հ. Կարապետյանը, բնականաբար, աշխատության վերջին գլուխը նվիրում է այդ հարցի պարզաբանմանը, փորձելով լուսաբանել ապստամբության պարտության պատճառները։ Տարակարծությունները Մայիսյան ապստամբության պատմության ուսումնասիրության բնագավառում հիմնականում վերաբերում են միայն և միայն պարտության պատճառներին։ Հեղինակը գալիս է այն ճիշտ եզրակացությանը, որ 1920 թ. ապրիլ—մայիս ամիսներին Հայաստանում գոյություն ուներ անմիջական ռևոլյուցիոն իրադրություն, կային ապստամբության օբյեկտիվ և սուբյեկտիվ ֆակտորները։ Ապստամբության հաղթանակի համար կային նաև որոշ արտաքին բարենպաստ պայմաններ։ Դա առաջին հերթին իր արտահայտությունը գտավ նրանում, որ Կարմիր Բանակը մտավ Անդրկովկաս, իսկ Ադրբեջանում հաստատվեցին սովետական կարգեր։

Աշխատության մեջ հեղինակը թվարկում է ապստամբության պարտության հետևյալ պատճառները.

1. Ապստամբության տեխնիկական և կազմակերպական վատ նախապատրաստումը, Արմենկոմի ուրվագծած նախնական ծրագրի (ապստամբությունը սկսել Ղազախից) խախտումը, Ալեքսանդրապոլի կոմիտեի կողմից դրսևորված շտապողականությունը։

2. Հայաստանի տարբեր շրջանների ապստամբական ելույթների վատ կոորդինացումը, որը հասցրեց ապստամբական ուժերի ցրտմանը և մանրատվածությանը.

3. Ապստամբական ուժերը փոխանակ հարձակման անցնելու. վարեցին պաշտպանողական տակտիկա, որ ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի լուրջ սխալն էր։

4. Միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի դաշինքը։

Վերոհիշյալ և այլ պատճառները, ըստ հեղինակի, խանգարեցին Մայիսյան ապստամբության հաղթանակին։ «Միայն ապստամբության մասին մարքս-լենինյան ուսմունքի հետևողական

կենսագործումը ապստամբության պլանավորումը, տարբեր վայրերի ապստամբական ելույթների միավորումը, ստանց հապաղելու վճռական հարձակողական գործողությունների ծավալումը և նրա հմուտ ղեկավարումը, անտարակույս կապահովեր ապստամբության հաղթանակը» (էջ 303)։

Մայիսյան ապստամբության պարտության պատճառների մասին Հ. Կարապետյանի արտահայտած կարծիքը հիմնականում համընկնում է սովետահայ պատմագրության մեջ տիրապետող տեսակետին։

Այժմ խոսենք աշխատության մի շարք թերությունների մասին։

Ամենից առաջ աչքի է ընկնում ամբողջ մենագրության և հատկապես նրա առաջին գլխի ձգձգվածությունը։ Ուրախալի է, որ հեղինակը աշխատության մեջ ձգտել է հնարավորին չափ շատ հիշատակել ապստամբության մասնակիցների ազգանունները և տալ նկարները։ Սակայն մեզ թվում է, որ այդ խնդրում հեղինակը կորցրել է չափի զգացմունքը։ Մենագրության առանձին էջեր փաստորեն վերածվել են ազգանունների ցուցակի։

Տարօրինակ է, որ աշխատությունը չունի Մայիսյան ապստամբության մասին լույս տեսած գրականության տեսությունն։

«Կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները և պարտիայի դիրեկտիվները, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և մյուս կազմակերպությունները 1917—1919 թթ. անջատվեցին մենշևիկներից» (էջ 84),—գրում է Հ. Կարապետյանը։ Մենշևիկներից կազմակերպչորեն անջատվելու մասին ցուցումը տվել է Ապրիլյան կոնֆերենցիան 1917 թ.։ Հայաստանում, ինչպես հայտնի է, բացի Ալեքսանդրապոլի կազմակերպությունից, մյուս բոլորը բաժանվել են միայն 1918—1919 թթ.։ Մի՞թե Հ. Կարապետյանը այդ խիստ ուշացումը համարում է Վ. Ի. Լենինի ցուցումների կատարում։ Մեզ թվում է, թե հեղինակը պարտավոր էր իր վերաբերմունքը ցույց տալ այդ խիստ կարևոր հարցի վերաբերյալ։

Հեղինակը չի տալիս տվյալ ժամանակաշրջանում գործող հայ քաղաքական պարտիաների գործունեության բնութագիրը, նրանց հարաբերությունները, դասակարգային էությունը և այլն։ Մինչդեռ հայ հասարակական պարտիաների գործունեությունը ոչ միայն Մայիսյան ապստամբության, այլև Սովետական իշխանության համար մղված պայքարի ամբողջ ժամանակաշրջանում ներկայացնում է զգալի գիտական հետաքրքրություն։ Պետք է ասել, որ այս թերությունը ընդհանրապես հատուկ է 1917—1920 թթ. մասին լույս ընծայված համարյա բոլոր աշխատություններին։

Հ. Կարապետյանը գրում է. «Կարսի Ռևկոմի կողմից թուրքական, ռուսական և հունական (մանավանդ վերջինների) ազգային խորհուրդների կողմից առաջարկված օգնությունից հրաժարվելը Ծ. Աղայանը իր «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» աշխատության մեջ համարում է լուրջ սխալ (էջ 253)։ Մենք այդ կարծիքը չենք բաժանում, գտնում ենք, որ Ռեկոմը ճիշտ վարվեց» (էջ 167)։

Սակայն զարմանալին այն է, որ Ծ. Աղայանի վերոհիշյալ աշխատության 253-րդ էջում խոսքը դնում է միայն ռուսական և հունական ազգային խորհուրդների առաջարկած օգնության մասին, իսկ թուրքական ազգային խորհրդի անունը ոչ մի անգամ չի հիշատակվում։ Կարսի Ռևկոմը առանց պրովոկացիայից վախենալու, անշուշտ, պետք է ընդուներ ռուսական և հունական ազգային խորհուրդների առաջարկած օգնությունը։ Մի՞թե կարելի է մոռանալ Բաքվի Կոմունայի հերոսական պատմության օգտակար փորձը, երբ մուսավաթականների պրովոկացիայի և նացիոնալիզմի թույնով վարակված չտեսնված քաոսային, բարդ ու խճճված պայմաններում կոմունարները հմտորեն օգտագործում էին հայկական ուժերը։

Ակնհայտ է, որ ապստամբության կազմակերպման գործում Արմենկոմը թույլ է տվել մի շարք կոպիտ սխալներ, որոնք վճռական նշանակություն են ունեցել ապստամբության պարտության գործում։ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի սխալները ևս իրենց նշանակությամբ չէին զիջում Արմենկոմի սխալներին։ Սակայն տարօրինակ է սովետահայ պատմաբանների վեճը այն մասին, թե որ շրջանը պետք է սկսեր ապստամբությունը՝ Ղազախը, թե Ալեքսանդրապոլը։ Մինչդեռ սխալը գալիս է հարցադրումից։ Ապստամբությունը Հայաստանի բոլոր շրջաններում պետք է սկսվեր միաժամանակ։ Այլ հարց է, թե Արմենկոմը որ շրջանն էր համարում ապստամբության միջնաբերդը Հայաստանում՝ Ղազախը, թե Ալեքսանդրապոլը։

Մայիսյան ապստամբությունը ունեցել է, ինչպես տեսանք, պարտություն մի շարք պատճառներ, բայց դրանց մեջ բախտորոշ նշանակություն ունեցավ այն, որ Արմենկոմը չկարողացավ Հայաստանի՝ ապստամբությանը լավ նախապատրաստված գոնե հիմնական շրջանները, միաժամանակ ուրի հանել։

Անկասկած է, որ եթե ապստամբական ելույթները միաժամանակ սկսվեին և միասնական պլանով ընթանային, ապա նրանք անպայման հաղթանակի կհասնեին։

Ամփոփելով այսքանով, Հ. Կարապետյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» աշխատությունը գալիս ներդրում է Սովետական իշխանության հաղթանակի համար մեղանում մղված պայքարի պատմության ուսումնասիրության գործում։

Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ։